

**ԱՐԹՈՒՐ ՂԱՄՔԱՐՅԱՆ**

ի. գ. դ., պրոֆեսոր,  
Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության  
և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,  
ՀՀ վաստակավոր իրավաբան,  
արդարադատության առաջին դասի խորհրդական

**ԹԱՄԱՐԱ ՇԱՔԱՐՅԱՆ**

ի. գ. թ., դոցենտ,  
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի,  
ՀՀ-ում ֆրանսիական համալսարանի դասախոս,  
ԵԽ ազգային փորձագետ, արդարադատության  
առաջին դասի խորհրդական

**ԴԱՏԱՆԱԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՂԱԿԱՐԳԸ ԱՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

1. *Ընդհանուր բնութագիրը*: 2005 թվականի փոփոխություններով ՀՀ սահմանադրությամբ դատախազության կարգավիճակն ամրագրող նորմերը սահմանված էին «Դատական իշխանությունը» վերտառությամբ 6-րդ գլխում: 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ հստակորեն տարանջատվեցին և առանձին գլուխներում իրենց ամրագրումը ստացան դատական իշխանության և դատախազության վերաբերյալ նորմերը, ինչպես նաև սահմանվեց «Դատախազությունը և քննչական մարմինները» վերտառությամբ՝ ՀՀ Սահմանադրության 8-րդ գլուխը:

Այնուհանդերձ, հարկ է նկատել, որ դատախազության վերաբերյալ սահմանադրական նորմերում ամրագրված չէ քաղաքական իշխանությունից դատախազության անկախության մասին պահանջ:

2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ նախատեսված է դատախազության գործառույթների (լիազորությունների) սահմանափակ ցանկ, որը հնարավորություն չի տալիս ճկունությամբ արձագանքելու հանրային կյանքում տեղի ունեցող փոփոխություններին և դատախազությանը վերապահել անհրաժեշտ գործառույթներ կամ լիազորություններ:

2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ առաջին անգամ նախատեսվեցին քննչական մարմինների և նրանց գործառույթների վերաբերյալ դրույթներ: Առանձին գլխում քննչական մարմինների մասին դրույթ նախատեսելով՝ Սահմանադիրը, կարծես, նպատակ էր հետապնդում գործադիր իշխանության համակարգից առանձնացնել նախաքննություն իրականացնող ինստիտուտ-

ները, մինչդեռ առայսօր ՀՀ-ում գործում են երկու տեսակի քննչական մարմիններ (ստորաբաժանումներ)՝ գործադիր իշխանության համակարգում գործող քննչական ստորաբաժանումներ և գործադիր իշխանությունից անկախ քննչական մարմիններ:

1.2. *Փոփոխությունների ընդհանուր ուղղությունները*: Սույն բաժնում ներկայացվում է արդի սահմանադրական փոփոխությունների երկու ուղղություն՝

1. ՀՀ դատախազության կարգավիճակի՝ սահմանադրական հիմքերի բարեփոխումներ՝

- դատախազության անկախության մասին դրույթի սահմանադրական ամրագրում.
- դատախազության գործառույթների (լիազորությունների) համակարգի վերափոխում և հստակեցում.

2. *Քննչական մարմինների կարգավիճակի բերափոխումներ՝*

• քննչական մարմինների՝ որպես առանձին մարմնի մասին սահմանադրական կարգավորման վերանայում.

• քննության գործառույթից կիսադատական տարրի առանձնացումը և քննչական մարմինների՝ գործադիր բնույթի (ապացույցների հավաքման) գործառույթների հստակեցում.

• քննչական մարմինների և քննիչների կարգավիճակի միասնականության ապահովում:

**II. Դատախազության սահմանադրական կարգավիճակի փոփոխությունները**

2.1. *Առկա վիճակը և խնդիրները*: 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանա-

դրությամբ դատախազությանը նվիրված է առանձին գլուխ (8-րդ գլուխը), որից բխում է, որ դատախազությունը գործադիր իշխանության համակարգից դուրս գործող պետական մարմին է: Ենթադրաբար կարելի է նշել նաև, որ դատախազությունը Սահմանադրությամբ նախատեսված անկախ մարմին է, սակայն ՀՀ Սահմանադրության տեքստում ուղղակիորեն նախատեսված չէ դատախազության անկախության մասին որևէ դրույթ:

ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածում սպառիչ թվարկված են դատախազության գործունեության հիմնական ուղղությունները՝ որպես լիազորություններ, ինչն ունի ինչպես դրական, այնպես էլ՝ բացասական կողմեր: Այդպիսի կարգավորումը պետք է դրական գնահատել, քանի որ դրանով կարևորվում է դատախազական գործունեության դերը և նշանակությունը, սակայն եթե դրանք դիտարկվում են որպես գործունեության հիմնական ուղղություններ, այլ ոչ թե լիազորություններ: Միաժամանակ, դատախազության գործառույթների (լիազորությունների)՝ սահմանադրական կարգավորումը սահմանափակում է դատախազության գործունեության շրջանակները:

Դատախազության գործառույթների (լիազորությունների)՝ սպառիչ ցանկն օրենսդրին զրկում է դատախազության գործառույթները միջազգային չափորոշիչներին համահունչ համապատասխանեցնել փոփոխվող հանրային կյանքի օբյեկտիվ պահանջներին: Այսպես՝ հասարակական-քաղաքական կյանքի փոփոխությունները պահանջում են դատախազության առջև դնել նոր խնդիրներ, որոնց լուծման նպատակով պետք է օրենսդիրը հնարավորություն ունենա դատախազությանն օժտել համապատասխան լիազորություններով:

ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածով նախատեսված են առավելապես դատախազության գործունեության ուղղությունները (դատախազության գործառույթները), քանի որ գործունեության՝ նշված ոլորտներում դատախազությունն օժտված է ընդարձակ լիազորություններով, որոնք նախատեսվում են առանձին օրենսդրական ակտերով: Ինչպես նշեցինք, ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի տերմինաբանական վերլուծու-

թյան արդյունքում պարզ է դառնում, որ այդ նորմում թվարկված՝ դատախազության սահմանադրական գործառույթները որակվում են որպես լիազորություններ: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված *լիազորությունների* (ընդգծումը՝ հեղ.) շրջանակում՝ օրենքի հիման վրա: Նշվածի համատեքստում դատախազության գործառույթների համակարգը վերանայման կարիք ունի:

**2.2. Առաջարկվող փոփոխությունների ընդհանուր նկարագրությունը:** Առաջարկվում է սահմանադրորեն ամրագրել, որ դատախազությունն անկախ և միասնական պետական մարմին է, որն իր գործառույթներն ու լիազորություններն իրականացնելիս ենթարկվում է Սահմանադրությանը և օրենքներին:

Դատախազության գործառույթները կամ լիազորությունները չպետք է Սահմանադրությամբ սպառիչ սահմանավեն: Օրենսդիրը պետք է հնարավորություն ունենա օբյեկտիվ անհրաժեշտության դեպքում դատախազությանը վերապահի նոր լիազորություններ կամ գործառույթներ:

**2.3. Հիմնավորումները**

**Ա. Պատմաիրավական և դիալեկտիկական տեսանկյունները**

(1) *Դատախազության անկախության մասին:* XVIII դարում ֆրանսիական հեղափոխությունից հետո՝ 1790 թ. դեկտեմբերի 1-ի օրենքով հիմնադրվեց le ministère public պաշտոնը, որն օժտված էր անկախության երաշխիքներով (նշանակվում էր ցմահ): Հետագայում այս գաղափարից նահանջը բացատրվում էր Նապոլեոնի այն մոտեցմամբ, որ դատախազությունը միջոց է՝ ազդելու դատարանի վրա, որի անկախությանը հակադրվում էր դատախազությունը: XIX դարում առանձին գերմանական պետություններում առկա էին անկախ դատախազություններ, որոնց պաշտոնատար անձինք անփոփոխելի էին<sup>1</sup>:

Խորհրդային իշխանությունների ժամանակաշրջանում բնականաբար չէր քննարկվում և չէր էլ կարող քննարկվել Խորհուրդներից և Կոմունիստական կուսակցությունից դատախա-

1. Закон и Суд: Вестник Русского юридического общества. – Рига, 1934. – № 1 (41). С. 1399.

զության անկախության հարցը<sup>2</sup>: Խորհրդային պետական իրավունքում դատախազության մարմինների առանձնացումը՝ որպես ինքնուրույն համակարգ, բացատրվում էր տեղական մարմիններից նրա անկախությունը ապահովելու նպատակով<sup>3</sup>:

Հայաստանի Հանրապետությունում դատախազությունը չի հանդիսացել գործադիր իշխանության մարմին, իսկ 1995 թ. Սահմանադրությամբ և 2005 թ. փոփոխություններով Սահմանադրությունում դատախազության մասին դրույթն ամրագրված էր դատական իշխանության վերաբերյալ գլխում:

2015 թ. սահմանադրական բարեփոխումների ժամանակ ՀՀ դատախազության կողմից ներկայացվել է առաջարկ՝ Սահմանադրության տեքստում ամրագրել դատախազության անկախության մասին դրույթ, սակայն այդ առաջարկը չի ընդունվել:

Այսպիսով՝ ՀՀ սահմանադրական զարգացման պատմության մեջ դատախազության անկախության մասին դրույթ Սահմանադրության տեքստում ամրագրված չի եղել<sup>4</sup>:

(2) *Դատախազության գործառույթների (լիազորությունների) մասին*: 1995 թ. Սահմանադրությամբ և 2005 թ. փոփոխություններով Սահմանադրությունում նախատեսված է եղել դատախազության լիազորությունների սպառիչ ցանկ: Հստակ սահմանվել է, որ դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, դատախազության մասին օրենքի հիման վրա:

Դատախազության լիազորությունների՝ սպառիչ ցանկի նախատեսումը զրկել է օրենս-

դրին՝ դատախազությանը վերապահելու օբյեկտիվ անհրաժեշտություն ունեցող նոր գործառույթներ. օրինակ՝ երկար տարիներ քննարկման հարց էր քրեաիրավական ոլորտում օպերատիվ-հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության սահմանադրականության հարցը:

Առայսօր վիճահարույց է մինչդատական վարույթի ընթացքում միջազգային համագործակցության ոլորտում հանձնման (էքստրադիցիայի)՝ դատախազության գործունեության սահմանադրականությունը:

**Բ. Իրավահամեմատական տեսանկյունը**

(1) *Միջազգային «փափուկ» իրավունքը դատախազության անկախության մասին*

**Բ.1.1. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի դիրքորոշումը**: Նախարարների կոմիտեի՝ 2000 թ. N R (2000) 19 հանձնարարականի 14-րդ կետի համաձայն՝ այն պետություններում, որտեղ դատախազությունն անկախ է կառավարությունից, պետությունը պետք է ձեռնարկի արդյունավետ միջոցներ, որպեսզի օրենքով ամրագրի դատախազության անկախության բնույթը և ծավալը: Նույն հանձնարարականի 19-րդ կետում նշված է՝ դատախազը բոլոր դեպքերում պետք է հնարավորություն ունենա անխոչընդոտ կերպով հարուցելու քրեական հետապնդում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հատկապես կոռուպցիայի, լիազորությունների անօրինական օգտագործման, մարդու իրավունքների խախտման համար:

2. 1922 թ. Ստալինին հասցեագրված Լենինին «Երկակի ենթակայության և օրինականության մասին» նամակում նա նշում էր. «Որպեսզի աշխատավորական դասակարգի դիկտատուրայի ձեռքում դատախազությունը համարվի ուժեղ և ճկուն գործիք՝ պետք է գործի կուսակցական հիմնարկների ամենամոտ դիտարկման ներքո և անմիջական համագործակցությամբ»: Ленин, т. XXVII, С. 299:

Секция].

3. Советское государственное право: Учебник / Под ред. А. Я. Вышинского; Академия наук СССР, Институт права. М.: 1938. С. 378-379.

4. «Դատախազության մասին» 1998թ. օրենքի 5-րդ հոդվածում ամրագրված էր՝ լիազորություններն իրականացնելիս դատախազության մարմինների անկախության մասին դրույթ, իսկ «Դատախազության մասին» 2007թ. օրենքում «դատախազության մարմինների անկախություն» ձևակերպումը հանվեց և դրա փոխարեն ամրագրվեց՝ յուրաքանչյուր դատախազի՝ իր լիազորություններն իրականացնելիս ինքնուրույն որոշումներ ընդունելու մասին և դատախազի գործունեությանը օրենքով չնախատեսված միջամտությունն արգելելու մասին դրույթ (Հոդված 6) և դատախազի անկախության մասին դրույթը (Հոդված 44): «Դատախազության մասին» ՀՀ 2017թ. օրենքում նախատեսված են 2007թ. օրենքի դրույթներին նման կարգավորումներ: Փաստորեն՝ 2007թ. և 2017թ. օրենքներում բացակայում է դատախազության որպես առանձին մարմնի ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ մասին սկզբունք, դրա փոխարեն ամրագրված է դատախազի ինքնուրույնության և անկախության մասին ոչ իրատեսական պահանջներ: Եթե դատախազությունը՝ որպես առանձին համակարգ չունի անկախության երաշխիքներ, այդ համակարգի տարրերը՝ դատախազները իրականության մեջ նույնպես չեն կարող լինել անկախ կամ ինքնուրույն

**Բ.1.2. Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումը:** Վենետիկի հանձնաժողովի՝ 2017 թ. հոկտեմբերի CDL-PI (2018)001 «Դատախազության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիքների և զեկույցների ամփոփում» վերտառությամբ փաստաթղթում ներկայացվել են դատախազության անկախության վերաբերյալ այս կառույցի դիրքորոշումները: Ընդհանուր առմամբ պետք է առանձնացնել հետևյալ դրույթները:

1. Դատախազության անկախության մասին միջազգային չափանիշ գոյություն չունի<sup>5</sup>, որը, կարծում ենք, պայմանավորված է այն հանգամանքով, որ մի շարք պետություններում դատախազությունը գործադիր իշխանության մաս է և ենթարկվում է Արդարադատության նախարարությանը:

2. Վենետիկի հանձնաժողովը պարբերաբար հաստատում է, որ առկա է դատախազության անկախության ապահովման ընդհանուր միտում<sup>6</sup>: Ավելին՝ «Դատական համակարգի անկախության վերաբերյալ եվրոպական չափանիշների հաշվետվության մասին» CDL-AD (2010) 040 փաստաթղթում Հանձնաժողովը նշել է, որ առկա է ոչ թե դատախազությունը գործադիր իշխանությանը կապելու կամ ենթարկելու միտում, այլ առավել անկախ դատախազական համակարգ ստեղծելու՝ լայն տարածում ստացած միտում:

Վենետիկի հանձնաժողովը «Հունգարիայի Հանրապետության նորմատիվային հանձնաժողովի վերաբերյալ» CDL (1995) 073rev կարծիքում նշել է. «Պետությունում հանրային մեղադրանքի համակարգի լիարժեք անկախությունը պետք է հանդիսանա այդ համակարգը կարգավորող հիմնարար սկզբունք: Հասարակությունն այս համակարգին կվստահի, եթե այդ համակարգի անկախությունը երաշխավորված է և պաշտպանվում է օրենքով»:

3. Դատախազության անկախության ճա-

նաչման համար կարևոր է Սահմանադրության կառուցվածքում նրա զբաղեցրած տեղը: Այսպես, Հանձնաժողովը «Դատախազության ծառայության մասին Մոլդովայի օրենքի նախագծի վերաբերյալ» CDL-AD (2008) 019 կարծիքում նշել է՝ «Սահմանադրությամբ դատախազությունը դատական իշխանության մաս է (Սահմանադրության IX գլուխ): Դա այլ պետական մարմիններից դատախազության անկախության համար ունի կարևոր նշանակություն»:

4. Միևնույն ժամանակ կարևոր է խուսափել դատախազության անկախությունն այլ պետական մարմինների՝ այդ թվում դատարանների անկախությանը սպառնալիք դառնալու հավանականությունից<sup>7</sup>: «Թեև Սահմանադրությունը պետք է ապահովի ինչպես դատախազության համակարգի, այնպես էլ գլխավոր դատախազի անկախությունը, սակայն պետք է ցուցաբերել զգուշություն, որպեսզի մի կողմից հավասարակշռվի կառավարության, պառլամենտի, ոստիկանության կամ հասարակության միջամտությունը, մյուս կողմից՝ գլխավոր դատախազի պատասխանատվությունը պատշաճ կատարելու իր գործառույթը»<sup>8</sup>:

(2) Այլ երկրների սահմանադրական կարգավորումները

**Բ.2.1. Դատախազության անկախության**

**մասին:** Իրավահամեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Եվրոպական այն երկրները, որոնց Սահմանադրություններում նախատեսված են դատախազության վերաբերյալ դրույթներ, որպես կանոն, ամրագրում են նաև դատախազության՝ իբրև անկախ կամ ինքնուրույն մարմին լինելու մասին պահանջ: Այսպես՝ Խորվաթիայի Սահմանադրության 121a հոդվածի համաձայն՝ դատախազությունն ինքնուրույն (autonomous) և անկախ իրավաբանական մարմին է...<sup>9</sup>: Սերբիայի Սահմանադրության 156-րդ հոդվածում ամրագրված է, որ դատախազությունը պետք է լինի անկախ պետական մարմին ...<sup>10</sup>:

5. CDL-AD (2013) 006, Мнение о проекте поправок к Закону о публичном преследовании Сербии, § 20.

6. Նույն տեղում:

7. Նույն տեղում:

8. CDL (1995) 073rev, Мнение о концепции регулирования Конституции Венгерской Республики, глава 11, стр.7.

9. **հղումը բացակայում է:**

10. <https://worldconstitutions.ru/?p=369>.

11. Սահմանադրության 134-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունը յուրահատուկ և անկախ պետական մարմին է: <https://mylektsii.ru/9-69152.html>.

12. Սահմանադրության 106-րդ հոդվածի համաձայն՝ հանրային դատախազությունը միասնական և ինքնուրույն պետական մարմին է, որը ...<https://worldconstitutions.ru/?p=113>

Նման մոտեցում նախատեսված է նաև Մոնտենեգրոյում<sup>11</sup>, Մակեդոնիայում<sup>12</sup>, Բելգիայում<sup>13</sup>, Իսպանիայում<sup>14</sup>, Իտալիայում<sup>15</sup>, Պորտուգալիայում<sup>16</sup> և այլն:

Ֆրանսիայի Սահմանադրության 64-րդ հոդվածն ընդհանուր հղում է կատարում դատական մարմինների անկախությանը, սակայն Ֆրանսիայի սահմանադրական խորհուրդը նշել է, որ այն ամբողջ ծավալով վերաբերելի է նաև դատախազության մագիստրատուրային (11.08.1993թ. թիվ 93-326 որոշում)<sup>17</sup>:

**Բ.2.2. Դատախազության գործառույթների (լիազորությունների) մասին:** Այն պետություններում, որտեղ դատախազությունը սահմանադրական ինստիտուտ է, նրա գործառույթներն այս կամ այն աստիճանի կոնկրետացմամբ ամրագրված են հիմնական օրենքում<sup>18</sup>:

Սահմանադրություններում, որպես կանոն, նախատեսված են դատախազության

գործառույթների՝ ոչ սպառիչ ցանկ: Այսպես՝ Սլովենիայի Սահմանադրության 135-րդ հոդվածի համաձայն՝ պետական դատախազը հարուցում և ներկայացնում է քրեական մեղադրանքը և օժտված է օրենքով սահմանված այլ լիազորություններով: Դատախազության կազմակերպման կարգը և լիազորությունները սահմանվում են օրենքով<sup>19</sup>: Մակեդոնիայի Սահմանադրության 106-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունը եզակի և ինքնուրույն պետական մարմին է, որը պաշտպանում է պետական մեղադրանքն այն անձանց վերաբերյալ, ովքեր կատարել են քրեական և այլ հանցագործություններ, ինչպես նաև իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ: Դատախազությունն իր լիազորություններն իրականացնում է Սահմանադրության և օրենքների հիման վրա և շրջանակներում<sup>20</sup>:

Դատախազության լիազորությունների կամ գործառույթների բաց ցանկ է նախա-

13. Սահմանադրության 151-րդ հոդվածի 1-ին պարագրաֆի համաձայն՝ դատախազն անկախ է անհատական քննություն կատարելիս կամ հետապնդում իրականացնելիս: <https://worldconstitutions.ru/?p=157>:

14. Սահմանադրության 124-րդ հոդվածի համաձայն՝ դատախազն անկախ է այլ պետական մարմինների գործառույթներից, որի խնդիրն է նպաստել արդարադատության իրականացմանը՝ օրինականության և մարդու իրավունքների պաշտպանության նպատակով: <https://worldconstitutions.ru/?p=149>:

15. Սահմանադրության 108-րդ հոդվածի համաձայն՝ օրենքն ապահովում է հատուկ դատարանների դատավորների, դրանց աղընթեր դատախազների անկախությունը: <https://worldconstitutions.ru/?p=148>:

16. Սահմանադրության 219-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունն ունի օրենքով սահմանված հատուկ կարգավիճակ և ինքնավարություն: <https://worldconstitutions.ru/?p=141>:

17. Суд и государство / Под ред. Л. В. Головки, Б. Матё. – М.: Статут, 2018. С. 85.

18. Додонов В.Н., Крутских В.Е. Прокуратура в России и за рубежом.-М.: Изд. НОРМА, 2001, С. 51.

19. <https://worldconstitutions.ru/?p=109>.

20. <https://worldconstitutions.ru/?p=113>.

21. Դատախազությունը համարվում է ինքնուրույն և անկախ պետական մարմին, որն իրավասու և պարտավոր է հետապնդել քրեական և այլ պատժելի արարքներ կատարած անձանց, ձեռնարկել միջոցներ Խորվաթիայի Հանրապետության սեփականությունը պաշտպանելու և օգտագործել իրավական միջոցներ Սահմանադրությունը և օրենքը պաշտպանելու համար: Դատախազության ստեղծումը, կազմակերպումը, լիազորություններն ու իրավասությունները սահմանվում են օրենքով (Սահմանադրության 125-րդ հոդված): <https://legalns.com/download/books/cons/croatia.pdf>.

22. Դատախազությունը անկախ պետական մարմին է, որն իրականացնում է հետապնդում հանցագործություններ և այլ պատժելի արարքներ կատարած անձանց նկատմամբ, միջոցներ է ձեռնարկում՝ պաշտպանելու սահմանադրականությունը և օրինականությունը: Դատախազությունն իր գործառույթներն իրականացնում է Սահմանադրության, օրենքների, վավերացված միջազգային պայմանագրերի և օրենքի հիման վրա ընդունված կարգավորումների համապատասխան:

Դատախազության կառուցվածքը, կազմակերպման կարգը և իրավասությունը (յուրիսդիկցիա) պետք է սահմանվեն օրենքով (Սահմանադրության 156-րդ, 157-րդ հոդվածներ): <https://www.ilo.org/dyn/natlex/docs/ELECTRONIC/74694/119555/F838981147/SRB74694%20Eng.pdf>:

23. Դատախազությունը պաշտպանում է ֆիզիկական, իրավաբանական անձանց և պետության իրավունքներն օրենքով պաշտպանվող շահերը: Դատախազի նշանակման և հետևանքման կարգը, իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև դատախազության կազմակերպման կարգը սահմանվում են օրենքով (Սահմանադրության 149-րդ, 151-րդ հոդվածներ): <https://www.ustavnysud.sk/en/ustava-slovenskej-republiky>:

24. Դատախազությունը հարուցում է քրեական հետապնդում և հօգուտ պետության պաշտպանում է մեղադրանքը: Դատախազությունը իրականացնում է նաև օրենքով սահմանված այլ լիազորություններ (Սահմանադրության 148-րդ հոդված): [http://www.codices.coe.int/NXT/gateway.dll/CODICES/constitutions/eng/eur/alb?fn=document-frameset.htm\\$f=templates\\$3.0](http://www.codices.coe.int/NXT/gateway.dll/CODICES/constitutions/eng/eur/alb?fn=document-frameset.htm$f=templates$3.0):



տեսված նաև Խորվաթիայում<sup>21</sup>, Սերբիայում<sup>22</sup>, Սլովակիայում<sup>23</sup>, Ալբանիայում<sup>24</sup>, Հունգարիայում<sup>25</sup> և այլուր:

**Գ. Դոկտրինալ տեսանկյունը**

(1) *Դատախազության անկախության մասին*: Դոկտրինայում դատախազության անկախության երաշխիքների հարցը քննարկվել է վաղուց: Օրինակ՝ պրոֆեսոր Ս. Զավադկսին, որը ցարական Ռուսաստանում զբաղեցրել է դատախազի, սենատորի պաշտոններ, նշում էր. «Կարելի է բավարարվել նաև առանց դատախազների անփոփոխելիության պահանջի՝ միայն այն պայմանով, եթե նախաքննության, ինչպես նաև ոստիկանական հետաքննության ավարտը կբխի դատարանից, եթե դատախազի ոչ մի առաջարկություն (ցուցում՝ հեղ.) (այդ թվում կալանքից ազատելու մասին) առանց դատավորի վավերացման, դատական քննիչի համար պարտադիր չի լինի, և վերջապես՝ բոլոր գործերը դատարան փոխանցելը լինի դատավորի իրավասությունը: Ցավալի կլինի, եթե որևէ մեկը դատի տրվի կամ ազատվի պատասխանատվությունից միայն դատախազի վրա ադմինիստրացիայի (գործադիր մարմնի՝ հեղ.) ճնշման ազդեցության ներքո: Հասարակության համար կարևոր է, որ ազդեցիկ հանցագործները չխուսափեն դատարանից, իսկ առանձին մարդկանց համար ոչ պակաս կարևոր է, որ նրանց հետ հաշիվներ չմաքրեն՝ ամբաստանյալի աթոռին նստեցնելով: **Լավ է արդարացված լինել, սակայն առավել լավ է, անմեղ լինելով, հետապնդման չենթարկվել**»<sup>26</sup>:

Այս հոդվածից հետո մինչև հոկտեմբերյան

հեղափոխության ժամանակաշրջանի մեկ այլ իրավագետ նշել է. «**Չի կարելի բավարարվել առանց դատախազի անփոփոխելիության պահանջի**»: Ընդ որում, հեղինակը, որը նույնպես դատախազական աշխատանքի փորձ ուներ, նշում էր. «Այն երկրներում, որտեղ դատախազությանը վերապահված է պաշտոնատար անձանց՝ այդ թվում բարձրագույն իշխանության կրողների դեմ քրեական հետապնդում հարուցելու լիազորություն, այն կարող է բավարար կերպով իրականացվել միայն վարչական իշխանությունից դատախազության անկախության պարագայում»<sup>27</sup>:

(2) *Դատախազության գործառույթների (լիազորությունների) մասին*: Ս. Ա. Օսիայանն արդարացիորեն նշում է, որ Սահմանադրության մեջ դատախազության մասին հիշատակելու ուժով դատախազությունը, ինչպես Նախագահը, օրենսդիր մարմինը, կառավարությունը, դատարանները, հանդիսանում է սահմանադրական ինստիտուտ: Սահմանադրական ինստիտուտներն օժտված են լեգիտիմության՝ ավելի բարձր աստիճանով, նրանց կարգավիճակն ավելի կայուն է և չի կարող փոփոխվել կամ վերացվել առանց Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ նախատեսելու<sup>28</sup>:

Միևնույն ժամանակ, դոկտրինում մշտապես քննարկվել է դատախազության՝ այս կամ այն գործառույթի Սահմանադրությամբ նախատեսված չլինելու դեպքում այդ գործառույթների իրականացման սահմանադրականությունը: Ընդ որում, նշվել են գործառույթներ, որոնց իրականացումը թեև Սահմանադրությամբ նա-

25. 1. Գլխավոր դատախազը և դատախազությունը անկախ են, նպաստում են արդարադատության իրականացմանը՝ որպես հանրային մեղադրող բացառապես կիրառելով պատասխանատվության վերաբերյալ պետության պահանջը: Դատախազությունը հետապնդում է հանցագործությունները, միջոցներ է ձեռնարկում ապօրինի գործողությունների կամ անգործության դեմ, ինչպես նաև նպաստում է դրանց կանխմանը:

2. Գլխավոր դատախազը և դատախազությունը՝ Իրականացնում են օրենքով սահմանված հետաքննության հետ կապված իրավասություններ, Դատարանում պաշտպանում են մեղադրանքը. վերահսկողություն են իրականացնում պատիժների կիրառման օրինականության նկատմամբ, որպես հանրային շահի պաշտպան իրականացնում են Սահմանադրությամբ և օրենքով սահմանված այլ գործառույթներ (Սահմանադրության 29-րդ հոդված): <https://web.archive.org/web/20140221180827/http://www.kormany.hu/download/a/1c/11000/The%20New%20Fundamental%20Law%20of%20Hungary.pdf>.

26. Заметки о прокуратуре / Проф. С. В. Завадский // Закон и Суд: Вестник Русского юридического общества. – Рига, 1929. – № 3 (сентябрь). – Стб. 85 – 88.

27. Лазаренко А. Н. О независимости прокуратуры // Закон и Суд: Вестник Русского юридического общества. – Рига, 1934. – № 1 (41). – С.1402.

28. Осипян С. А. Российский федерализм и конституционно-правовой статус прокуратуры: концептуальные проблемы. Автореф. дисс. ... докт. юрид. наук. М.: 2006. С. 47.

խատեսված չի եղել, սակայն օրենսդիրն այն ամրագրել է. օրինակ՝ քրեաիրավական ոլորտում օպերատիվ- հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ հսկողությունը<sup>29</sup>:

**Գ. Դատախազության գործառույթների (լիազորությունների) համակարգի վերանայումը**

(1) *Քրեական հետապնդման հարուցումը և դադարեցումը*: Քրեական հետապնդում հարուցելը, իսկ մինչդատական վարույթում՝ հետապնդումը դադարեցնելը դատախազության բացառիկ լիազորությունն է:

Քրեական հետապնդման հարուցումը և այն դադարեցնելը կիսադատական գործառույթ է, ինչը վճռորոշ նշանակություն ունի այն իրականացնող մարմնի անկախության և պետական իշխանության համակարգում այդ մարմնի տեղորոշման համար:

Օրենսդրական քաղաքականության ընթացքում մշտապես քննարկվել և նույնիսկ պոզիտիվ-իրավական ամրագրում է ստացել (թեև չի գործել<sup>30</sup>) այն գաղափարը, որ քրեական հետապնդում հարուցելը դատախազության բացառիկ լիազորությունն է:

Քրեական դատավարության նոր օրենսդրության հայեցակարգում երկար քննարկումների արդյունքում ընդունվեց այն առաջարկը, որ քրեական հետապնդում հարուցելը դատախազի կողմից անձին մեղադրյալի կարգավիճակ տալն է: Անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշումը կայացնում է ոչ թե գործադիր իշխանության համակարգում գործող պաշտոնատար անձը, այլ դատախազը:

(2) *Քննչական գործողությունների կատարումը*: Դատախազությունն օրենքով նախա-

տեսված դեպքերում պետք է օժտված լինի (հատկապես գործադիր իշխանության մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու նպատակով) ապացույցներ հավաքելու լիազորությամբ (չշփոթել դատախազության համակարգում քննիչներ ունենալու՝ նախկին անթույլատրելի պրակտիկայի հետ): Բանն այն է, որ քննության գործառույթը վերապահվում է գործադիր իշխանության մարմիններին, որոնք կարող են բավարար կամք ու ջանասիրություն չցուցաբերել պաշտոնատար անձանց մեղքը հիմնավորող ապացույցների հավաքման ուղղությամբ: Նման բացառիկ իրավիճակներում դատախազը պետք է հնարավորություն ունենա կատարելու, այսպես կոչված, «դատախազական հետաքննություն»:

Դատախազի կողմից քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ ակտերը կամ այլ դատավարական որոշումներն անմիջապես բողոքարկվում են դատարան: Այլ կերպ ասած՝ եթե գործադիր իշխանության մարմնի կողմից ապացույցների հավաքման գործընթացը գտնվում է դատախազի հսկողության ներքո, ապա դատախազի կողմից առանձին դեպքերում ապացույցների հավաքման գործընթացը գտնվելու է դատարանի **հսկողության** ներքո:

(3) *Պեղական շահերի պաշտպանության հայցի հարուցումը*: Հայաստանի սահմանադրական իրավունքի զարգացումը վկայել է այն մասին, որ քաղաքական իշխանությունն ամեն գնով՝ հատկապես եվրոպական չափանիշների ապահովման հղմամբ փորձել է սահմանափակել պետական շահերի պաշտպանության գործառույթի բովանդակությունը կամ այն

29. **Մնացականյան Ս.** Հայաստանի Հանրապետության դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները: Թեկնածուական ատենախոսություն: Երևան, 2009:

30. «Դատախազության մասին» 2007թ. օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված էր, որ քրեական հետապնդման հարուցումը դատախազի բացառիկ լիազորությունն է, սակայն նույն օրենքի 66-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված էր, որ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը ուժի մեջ են մտնում քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունումից հետո:

31. Իրավագիտության դոկտոր Գ. Դանիելյանը նշում է, որ դատախազությանը որևէ լրացուցիչ գործառույթ վերապահելու միտում գոնե վերջին տասնամյակի ընթացքում անգամ չի առկայծել: ... Դատախազության գործառույթները հանել սահմանադրական կարգավորումից և թողնել ընթացիկ օրենսդրության կարգավորմանը: Նշված մոտեցման ընդդիմախոսները նշում են. «Սահմանադրության դրույթներն բնավ արհեստական արգելք չեն կենսականորեն անհրաժեշտ խնդիրներ լուծելու համար: Իսկ ինչ վերաբերում է լրացուցիչ գործառույթներ վերապահելու խնդրին, ապա... այսօր նկատվում է Սահմանադրությամբ ամրագրված գործառույթները՝ սահմանափակման նկատառումով նենգափոխելու ընդգծված քաղաքականությունը»: Տե՛ս **Դանիելյան Գ.**, Սահմանադրական բարեփոխումների գործընթացի շեղումները // Օրենք և իրականություն, 2001, թիվ 23-24, էջ 3:

իրականացնելու հնարավորությունը<sup>31</sup>:

Այս քաղաքականության վերջնակետն այն էր, որ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության մեջ պետական շահերի պաշտպանության գործառույթը հանվեց դատախազության՝ ընդհանուր գործառույթների համակարգից և առանձին մասով այն որակվեց որպես **բացառիկ դեպքերում** իրականացվող գործառույթ:

Դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության հայցի հարուցման նկատմամբ նման քաղաքականությունը կարող է բացատրվել երկու հանգամանքով՝

ա) խորհրդային դատախազությանը հատուկ «ընդհանուր հսկողության» ուրվականի վերակենդանացման եվրոպական վախերով,

բ) կոռումպացված դերակատարների՝ պետության և համայնքի գույքային շահերի դեմ հանցավոր ոտնձգությունները դատախազության աչքից անտեսանելի դարձնելու ձգտմամբ:

Այս ենթադրյալ գործոնները հետհեղափոխական Հայաստանում ժամանակավրեպ են, քանի որ ներկայումս ոչ միայն բացակայում են պետության գույքային շահերի դեմ ոտնձգություններին չհակազդելու՝ լատենտային ձգտումները, այլև քաղաքական բարձր մակարդակում ողջունվում է կոռուպցիայի դեմ պայքարի գործունակ կառուցակարգերի ներդրումը:

Բացի այդ, դատախազությունում տեղի ունեցած սերնդափոխությունը ջնջել է խորհրդային դատախազությանը ներհատուկ ընդհանուր հսկողության վերաբերյալ որևէ ինստիտուցիոնալ հիշողություն: Բացակայում է այն վերականգնելու որևէ իրավա-քաղաքական նախադրյալ: Այս ժամանակահատվածում կայացել են ՄԻՊ-ի ինստիտուտը, հաշվեքննիչ պալատը. գործադիր իշխանության համակարգում գործում է նաև պետական վերահսկողության ծառայությունը:

Այսպես՝ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ 103-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան: 2015 թվականի փոփոխություն-

ներով ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

Վերը նշված նորմերի համադրումից բխում է, որ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ նշված լիազորության իրականացման համար սահմանվել է «**բացառիկ դեպքերում**» եզրույթը: Վերջինս ավելի է սահմանափակել առանց այդ էլ օրենսդրությամբ սահմանափակված լիազորությունը, թեև «օրենքով սահմանված դեպքերում» եզրույթը արդեն իսկ նշանակում է որ ոչ բոլոր դեպքերում է, որ դատախազությունը պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

Հարկ է նշել, որ Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհրդի կողմից 2008 թվականի հոկտեմբերի 21-ին «Դատախազության դերը քրեաիրավական ոլորտից դուրս» վերտառությամբ թիվ 3 կարծիքում նշված է, որ կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է՝ որոշ պետություններում դատախազները գործառույթներ ունեն քրեական իրավունքի ոլորտից դուրս՝ քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, վարչական, ընտրական իրավունքի բնագավառներում, ինչպես նաև շրջակա միջավայրի, սոցիալական իրավունքների և խոցելի խմբերի (ինչպիսիք են անչափահասները, սահմանափակ կարողությամբ, ինչպես նաև շատ քիչ եկամուտ ունեցող անձինք) իրավունքների պաշտպանության ասպարեզում: Որոշ անդամ պետություններում դատախազությունների խնդիրները և աշխատանքի ծավալն այս ոլորտում կարող է գերազանցել քրեական արդարադատության բնագավառում դատախազների դերին<sup>32</sup>:

Նշված մոտեցումներն ամրագրված են նաև ԵԽ նախարարների կոմիտեի՝ 2012 թվականի սեպտեմբերի 19-ին ընդունված թիվ 11 հանձնարարականում և դրա բացատրական հուշագրում: **Այնուհանդերձ, քրեական ոլորտից դուրս դատախազության պարտականությունների, գործառույթների վերաբերյալ**

32. Stu` Opinion No 3(2008) Consultative Council of European Prosecutors : “THE ROLE OF PROSECUTION SERVICES OUTSIDE THE CRIMINAL LAW FIELD” կետ 16.



միջազգայնորեն ճանաչված նորմեր և կանոններ չկան. այդ գործառույթները պայմանավորված են ներպետական իրավական և պատմական ավանդույթներով<sup>33</sup>:

2.4. Փոփոխության համակարգային կայան այլ նորմերի հետ

**Ա. Դատախազության անկախության մասին:** Սահմանադրությունում դատախազության անկախության մասին դրույթի ամրագրումը, ինչպես նաև քրեական հետապնդման հարուցման և դադարեցման՝ կիսադատական գործառույթները բացառապես դատախազությանը վերապահելը կառաջացնի սահմանադրական այլ նորմերի փոփոխության կամ նոր նորմերի սահմանման անհրաժեշտություն:

(1) Գլխավոր դատախազի վերանշանակման (վերընտրման) հնարավորության վերացումը և պաշտոնավարման ժամկետի երկարացումը: Դատախազության իրական անկախության ապահովման նպատակով անհրաժեշտ է ապահովել ՀՀ գլխավոր դատախազի անկախությունը քաղաքական իշխա-

նությունից, որի նպատակով պետք է՝

նախ՝ վերանայել Գլխավոր դատախազի վերանշանակման հնարավորությունը և պաշտոնավարման ժամկետը: Նկատի ունենալով, որ Գլխավոր դատախազի նշանակման գործընթացում ներգրավված է քաղաքական իշխանությունը, ուստի առաջին պաշտոնավարումից հետո կրկին վերանշանակվելու՝ Գլխավոր դատախազի ձգտումը ակամայից կախվածություն է ստեղծում նրան առաջադրող և նշանակող քաղաքական մարմիններից. հետևաբար՝ Սահմանադրության այլ նորմերում պետք է նախատեսել, որ Գլխավոր դատախազը կարող է նշանակվել մեկ անգամ՝ առանց պաշտոնավարման ժամկետը լրանալուց կամ լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելուց հետո վերանշանակվելու հնարավորության<sup>34</sup>:

Երկրորդ՝ Գլխավոր դատախազի վերանշանակման հնարավորության վերացման և քրեական հետապնդման ոլորտում քրեական քաղաքականության՝ հարաբերական կայունության ապահովման նպատակով Սահմանադրու-

33. Մի շարք երկրների փորձը, մասնավորապես, Բելգիա, Չեխիա, Գերմանիա, Բուլղարիա, Հունգարիա, Իռլանդիա, Էստոնիա, Դանիա, Ֆինլանդիա, Կրաստան, Շվեդիա, Շվեյցարիա և Միացյալ Թագավորություն և այլն, ցույց է տալիս, որ դատախազությունը քրեական ոլորտից դուրս օժտված է լայն լիազորություններով, որոնք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին՝ դատախազը կարող է հարուցել վարույթ՝ ամուսնությունը անվավեր ճանաչելու համար, մահացած երեխայի անունից հայրությունը չեղյալ ճանաչելու համար, եթե որպես հայր ճանաչված անձն մահացած երեխայի հայրը չէ, այն անձի անունից, որը ճանաչվել է որպես երեխայի հայր, և որն ի վիճակի չէ վարույթ հարուցելու իր հայրությունը չեղյալ հայտարարելու համար, անչափահասների որդեգրումը անվավեր ճանաչելու համար, ալիմենտի պահանջով, երեխայի խնամքի հարցով, ծնողական իրավունքից զրկելու համար, եթե անձը ցանկացած պատճառով ի վիճակի չէ պաշտպանելու սեփական իրավունքները, ինչպես նաև, եթե հիմնադրամը չի իրականացնում իր ստեղծման նպատակները կամ եթե հիմնադրամի գրանցումը ենթակա է մերժման օրենքի փոփոխության հիմքով՝ հիմնադրամը լուծարելու համար, հանրային հիմնադրամների ստեղծման օրինականությունն ապահովելու համար, եթե հիմնադրամի գործունեության օրինականությունն այլ կերպ հնարավոր չէ ապահովել, մահացած անձի կամ լուծարված իրավաբանական անձի գրպարտության դեպքում, եթե խախտվում է հանրային շահը, ցանկացած պայմանագրի պայման, որը ենթադրվում է, որ անարդար է, կարող է վիճարկվել դատախազության կողմից, պայմանագիրն առջին ճանաչելու համար, եթե այդ պայմանագիրը վսասում է հանրային շահին, եթե, բացառությամբ կուսակցությունների, հասարակական կազմակերպության գործունեության օրինականությունն այլ կերպ հնարավոր չէ ապահովել, կազմակերպության գրանցումը չեղյալ ճանաչելու համար, քաղաքացիության վկայականով հաստատված փաստերը դատարանում վիճարկելու համար, շրջակա միջավայրին վնաս հասցնելու դեպքում՝ արգելելով այդպիսի գործունեությունը կամ վսասի հատուցում պահանջելով, ցանկացած անձի դեմ վարույթ է հարուցում, որը խախտել է կենդանիների պաշտպանության օրենսդրությունը, ապրանքային նշանի գրանցման և գրանցումը չեղյալ հայտարարելու մասին, արտոնագրի տրամադրման կամ վերացման մասին որոշումը փոխելու համար, եթե դրանք առևտրային նպատակով շահագործելը հակասում է հանրային կարգին կամ բարոյականությանը, հինգ տարի շարունակ անհայտ կորած անձանց մահացած ճանաչելու համար և այլն: Տես Թ.Շաքարյան, Դատախազության սահմանադրաիրավական հիմքերի իրացման արդի ուղենիշները, «Օրինականություն» թիվ 95, 2016, էջ 24-25:

34. Գլխավոր դատախազի վերանշանակման սահմանափակումը առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծել, որ սահմանափակում է մարդու՝ հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքը: Եթե դա նույնիսկ այդպես է, ապա տվյալ պարագայում Գլխավոր դատախազի՝ քաղաքական իշխանությունից անկախ լինելու պահանջը ինքնին արդարացնում է հանրային ծառայության անցնելու իրավունքի նման սահմանափակումը: Վենետիկի հանձնաժողովը նմանատիպ հարց քննարկել է Նախագահների երրորդ անգամ վերընտրվելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ և այն համարել է իրավաչափ՝ հանուն ժողովրդավարական ռեժիմների պահպանման:

թյամբ պետք է նախատեսել Դատախազի պաշտոնավարման՝ առավել երկար ժամկետ: Ընդ որում, այդ ժամկետը սահմանելիս պետք է այնպես կարգավորել, որ այն հնարավորինս չհամընկնի քաղաքական իշխանության ընտրությունների ժամկետի հետ:

(2) *Գլխավոր դատախազի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, հարկադրանքի միջոցներ կիրառելու՝ բարդացված ընթացակարգի սահմանումը:* Գլխավոր դատախազի համար իրավական պաշտպանության որոշակի երաշխիքներ, այնուհանդերձ, 2015 թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում չամրագրվեցին: Դատախազության անկախության՝ սահմանադրական ամրագրման պայմաններում, պետք է նախատեսել Գլխավոր դատախազի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, հարկադրանքի միջոցներ կիրառելու տարբերակված կարգ. օրինակ՝ Գլխավոր դատախազի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել ՀՀ վճռաբեկ դատարանի երեք դատավորների նախնական վերահսկողությամբ: Ընդ որում, ցանկալի է՝ այս կարգավորումները նախատեսել Սահմանադրության տեքստում, ոչ թե թողնել օրենսդրի հայեցողությանը:

(3) *Գլխավոր դատախազի լիազորությունների դադարեցման հիմքերի սահմանադրական կարգավորումը:* Դատախազության անկախության երաշխավորման նպատակով Սահմանադրությամբ պետք է նախատեսել Գլխավոր դատախազի լիազորությունների դադարեցման սպառիչ հիմքերը: Քաղաքական իշխանությունը չպետք է հնարավորություն ունենա օրենսդրական կարգավորումները փոփոխելու եղանակով միջամտել Դատախազության գործունեությանը: Հատուկ պետք է կարգավորել Գլխավոր դատախազի պաշտոնանկության հիմքերը և կարգը:

**Բ. Դատախազության լիազորությունների մասին:** Դատախազության գործառույթները կամ լիազորությունները չպետք է Սահմանադրությամբ սպառիչ սահմանվեն: Սակայն Սահմանադրության մեջ պետք է ամրագրել, որ քրեական հետապնդման հարու-

ցելը (անձին որպես մեղադրյալ ներգրավելը), գործը դատարան ուղարկելը, մինչդատական վարույթի ընթացքում քրեական հետապնդումը դադարեցնելը **դատախազության բացառիկ գործառույթն է:**

Սահմանադրության մեջ նախատեսել դրույթ այն մասին, որ դատախազության՝ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու, այդ նպատակով նյութեր հավաքելու դեպքերը և կարգը սահմանվում են օրենքով:

Այս համատեքստում հարկ է հանել «բացառիկ դեպքերում» եզրույթը, ինչպես նաև պետական շահ հասկացությունը փոխարինել հանրային շահ հասկացությամբ՝ հնարավորություն տալով օրենսդրին որոշելու՝ կոնկրետ որ դեպքերում դատախազին լիազորել իրականացնելու հանրային շահերի պաշտպանությունը:

### III. Քննչական մարմինների կարգավիճակի փոփոխությունները

3.1. *Առկա վիճակը և խնդիրները:* ՀՀ Սահմանադրության «Դատախազությունը և քննչական մարմինները» վերատառությամբ 8-րդ գլուխը սահմանվեց 2015 թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում: Մինչ այդ, ՀՀ Սահմանադրության մեջ քննչական մարմինների մասին հատուկ սահմանադրական դրույթ նախատեսված չէր<sup>35</sup>:

Թվում էր, որ նոր խմբագրությամբ Սահմանադրությունն ազդարարելու էր գործադիր իշխանության մարմինների համակարգից քննչական մարմինների (ստորաբաժանումների) դուրս բերման գործընթացը, մինչդեռ ՀՀ-ում առայսօր ինստիտուցիոնալ տեսանկյունից շարունակում են գործել երկու տեսակի քննչական մարմիններ (ստորաբաժանումներ)՝ գործադիր իշխանության համակարգում գործող (ԱԱԾ և ՊԵԿ քննչական ստորաբաժանումներ) և գործադիր իշխանությունից դուրս գործող քննչական մարմիններ (Քննչական կոմիտե (այսուհետ՝ ՔԿ) ու Հատուկ քննչական ծառայություն (այսուհետ՝ ՀՔԾ):

Քննչական մարմինների՝ գործադիր իշխանությունից անկախ մարմնի ինստիտուցիո-

35. ՀՀ Սահմանադրության 178-րդ հոդվածի համաձայն՝ քննչական մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմակերպում և իրականացնում են մինչդատական քրեական վարույթը: Քննչական մարմինների կարգավիճակը, լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են օրենքով:

նալ առանձնացումն արդարացված է քրեա-դատավարական հարթությունում քննչական մարմինների կիսադատական գործառույթների առկայությամբ: Քննչական մարմինների կիսա-դատական բնույթի գործառույթին օտար է վարչաիրավական ենթակայությունը, մինչդեռ պետական կառավարման մարմիններին ներ-հատուկ է վարչաիրավական ենթակայության հարաբերությունները:

Այս տրամաբանությունն ամբողջ ծավա-լով իրացնելու դեպքում քննչական բոլոր մարմինները պետք է դուրս բերվեին պետական կառավարման համակարգից:

*Առաջին՝ պետական կառավարման և քննչական մարմինների տարանջատվածու-թյունը* ՀՀ Սահմանադրության կառուցվածքի *տեսանկյունից*: Ինչպես նշվեց, ՀՀ Սահմանա-դրությամբ դատախազության և քննչական մարմինների վերաբերյալ սահմանադրական նորմերն առանձնացված են ինչպես գործադիր իշխանության, այնպես էլ դատական իշխանու-թյան մարմինների վերաբերյալ գլուխներից, դատախազությանը և քննչական մարմիններին նվիրված է առանձին գլուխ: ՀՀ Սահմանա-դրության կառուցվածքը թեև ունի առավելապես իրավատեսնիկական նշանակություն, սակայն ի թիվս այլ հանգամանքների, Սահմանա-դրության կառուցվածքի տրամաբանությունից կարելի է բխեցնել, որ դատախազությունը և նախաքննության մարմինները պետական կա-ռավարման մարմինների համակարգից դուրս գործող մարմիններ են:

*Երկրորդ՝ պետական կառավարման հա-մակարգի և քննչական մարմինների տարան-ջատվածությունը պաշտոնատար անձանց հարթությունում*: ՀՀ Սահմանադրությամբ պե-տական կառավարման և քննչական մարմին-ները միմյանցից տարանջատված են ոչ միայն ինստիտուցիոնալ, այլև պաշտոնատար ան-ձանց հարթությունում: Այսպես՝ ՀՀ Սահմանա-դրության 44-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքով կարող են սահմանվել դատավորների, դատախազների, քննիչների, ինչպես նաև զին-ված ուժերում, ազգային անվտանգության, ոս-տիկանության և այլ ռազմականացված մար-միններում ծառայողների հավաքների ազատության իրավունքի իրականացման սահ-մանափակումներ: Ինչպես նկատում ենք, ՀՀ Սահմանադրությամբ տարանջատված է դա-

տարաններում, դատախազությունում և քնն-չական մարմիններում պաշտոնները զբաղեց-նող անձանց և պետական կառավարման՝ ռազմականացված մարմինների ծառայողների՝ կոնկրետ իրավունքի սահմանափակման իրա-վական կարգավորումը:

Ավելին, ՀՀ Սահմանադրությամբ նշված պաշտոնատար անձանց առանձին իրավունք-ների սահմանափակման հարցերի՝ տարբերակ-ված կարգավորումը կրում է սկզբունքային բնույթ: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավոր-ները, դատախազները և քննիչները չեն կարող լինել կուսակցության անդամ: Օրենքով կարող են սահմանվել զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազ-մականացված մարմիններում ծառայողների կողմից կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունքի սահմանափակումներ: Ինչպես նկատում ենք, դատավորի, դատախազի և քննիչի՝ կու-սակցության անդամ լինելու իրավունքը հս-տակ սահմանափակված է սահմանադրական արգելքով, իսկ պետական կառավարման՝ ռազմականացված մարմինների ծառայողների համար կուսակցության անդամագրվելու իրա-վունքի հնարավոր սահմանափակումը թողն-ված է օրենսդրի հայեցողությանը: Գործնա-կանում հնարավոր է, օրինակ, որ օրենսդիրը չսահմանափակի ազգային անվտանգության մարմինի ծառայողների՝ կուսակցության անդա-մագրվելու իրավունքը, մինչդեռ ազգային ան-վտանգության համակարգում գործող քննիչ-ների համար նման արգելքը սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ: Նման պայմաններում կստեղծվի ազգային անվտանգության ծառա-յողների կարգավիճակի երկվություն:

*3.2. Առաջարկվող փոփոխությունների ընդհանուր նկարագրությունը*: Քննչական մար-մինները, ազատվելով իրենց ոչ հատուկ կիսա-դատական բնույթի գործունեությունից (քրեա-կան հետապնդումը դադարեցնելը), իրականացնելու են դասական քրեական-ոս-տիկանական գործունեություն՝ ապացույցների հավաքում, որն իր բնույթով գործադիր գոր-ծունեություն է: Նման պայմաններում վերա-նում է քննչական մարմինների՝ գործադիր իշխանությունից առանձնացնելու անհրաժեշ-տությունը:

3.3. Հիմնավորումները

**Ա. Պատմաիրավական տեսանկյունը:**

Քննչական մարմինների՝ գործադիր իշխանությունից սահմանադրական հարթությունում առանձնացման կամ ստորադասության սկզբունքի հիման վրա գործող քննիչի դատավարական ինքնուրույնության՝ օրենսդրական ճանաչման իրականության հետ օբյեկտիվորեն չկապված կեղծ գաղափարների ծագումաբանությունը գալիս է խորհրդային իրավունքից:

Ինչպես նշում է համեմատական իրավունքի՝ ռուս հայտնի մասնագետ պրոֆեսոր Լ. Գոլովկոն. «խորհրդային իրավական համակարգը, չճանաչելով իշխանության տարանջատումը, հայեցակարգային հարթությունում ամբողջությամբ միախառնել էր ոստիկանական և դատական գործառույթները՝ ոստիկանությանը վերապահելով իրենց բնույթով դատախազական և դատական գործառույթներ: Ոստիկանությունն արարքին տալիս էր իրավաբանական որակում, քրեական գործի ընթացքի վերաբերյալ կայացնում էր որոշումներ, կիրառում էր հարկադրանքի միջոցներ և այլն: Ոստիկանությանը, վերապահելով իրեն ոչ հատուկ գործառույթներ, խորհրդային իրավունքը տեսական հարթությունում նենգափոխել էր ոստիկանության, դատախազության և դատարանի ինստիտուցիոնալ տարանջատումը տարբեր տեսակի «քննիչ», «հետաքննիչ», «քննչական բաժնի պետ», «օպերատիվ-հետախուզական ծառայություն» և «քննության մարմին» կեղծ-դատավարական տարբերակումներով (դիֆերենցացիաներով՝ Ա.Դ.): Այս հիմքով ծագել են բազմաթիվ չփարատված հակասություններ «քննիչի դատավարական ինքնուրույնության» և գերատեսչական հիերարխիկ վերահսկողության միջև, քրեաիրավական վեճն ըստ էության լուծելու (օրինակ՝ հանցակազմի բացակայության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելը) լիազորության պատկանելիության հարցում: Նման կեղծ-դատավարական տարբերակման ցանկացած փորձ առաջացնում է տեսական և գործնական փակուղի: Ոստիկանության՝ այս կամ այն ներկայացուցիչը, ինչպես էլ որ այն կոչվի (քննիչ, հետաքննիչ և այլն) նա իրավասու է իրակա-

նացնել միայն քրեական-ոստիկանական գործունեություն՝ իր ողջ գենետիկ սահմանափակումների պահպանմամբ:

Ինստիտուցիոնալ հարթությունում հայեցակարգային առումով չկա և չպետք է լինի ոչ «քննության մարմին», ոչ էլ «հետաքննության մարմին». առկա է միայն քրեական ոստիկանություն: Այս իմաստով «քննչական կոմիտեի» ստեղծման գաղափարը պետք է գնահատել բացառապես նոր ոստիկանական գերատեսչություն ստեղծելու տեխնիկական անհրաժեշտության առկայության կամ բացակայության պրիզմայով: Քննչական կոմիտեն ոչ այլ ինչ է, քան «ոստիկանական գերատեսչություն»<sup>36</sup>:

**Բ. Իրավահամեմատական տեսանկյունը:**

Իրավահամեմատական տեսանկյունից Սահմանադրությամբ առանձին քննչական մարմիններ, ինչպես օրինակ քննչական կոմիտեն է, ունենալու հստակ օրինաչափություն առկա չէ: Եվրոպական երկրներում քննությունը, որն ազատված է կիսադատական տարրից, դիտվում է որպես ոստիկանական գործունեություն և հատուկ սահմանադրական կարգավորումներ նախատեսված չեն:

Հետխորհրդային պետություններից Ռուսաստանի Դաշնությունը և Բելառուսի Հանրապետությունը թեև ունեն ԲԿ, սակայն Սահմանադրության տեքստում քննչական մարմինների վերաբերյալ հատուկ սահմանադրական նորմ նախատեսված չէ:

**Գ. Քննչական գործունեությունը (ապացույցների հավաքումը) - ոստիկանական գործունեություն:**

Քրեական արդարադատության համակարգը (նրա պետական հատվածամասը) պետք է կառուցել երեք ինստիտուցիոնալ տարրերի՝ ոստիկանության, դատախազության և դատարանների գործառույթների տարանջատման հիման վրա: Այս իրավիճակում ոստիկանությունը հավաքում է ապացույցներ, իսկ դատախազությունը, ոստիկանության հավաքած ապացույցների հիման վրա արարքին տալիս է իրավական գնահատական և լուծում է դատարանում քրեական հետապնդում հարուցելու կամ հետապնդումը դադարեցնելու հարցը: Ոստիկանական գործունեությունը տարբերվում է դատախազական գործունեությունից

36. Головки Л. В. Реформа полиции в контексте модернизации предварительного производства в российском уголовном процессе // <https://www.iuaj.net/node/484>.

այն իորդությամբ, որ առաջինի բուն էությունն ապացույցների հավաքման գործընթացն է, իսկ դատախազությանը՝ արարքներին իրավաբանական որակում տալը, քրեական գործի հետագա ընթացքի վերաբերյալ որոշումներ կայացնելը և այլն<sup>37</sup>:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունից հետո ակնկալվում էր, որ քննչական բոլոր մարմինները (ստորաբաժանումները) պետք է դուրս բերվեին պետական կառավարման համակարգից, մինչդեռ այս ժամանակահատվածում ԱԱԾ և ՊԵԿ քննչական ստորաբաժանումները ոչ միայն պահպանվեցին գործադիր իշխանության համակարգում, այլ իրավական քաղաքականություն մշակող սուբյեկտների հայեցակարգային ընկալումներում է ապագայում ստեղծելիք Ներքին գործերի նախարարությանը որոշ գործերով վերապահել քննության գործառույթ:

Քննչական մարմինների՝ գործադիր իշխանության համակարգից դուրս, իբրև անկախ մարմնի առանձին սահմանադրական կոնստրուկցիայի արհեստական լինելու մասին է վկայում նաև այն, որ Սահմանադրությունը չի նախատեսել քննչական մարմինների ղեկավարների նշանակման և ազատման այնպիսի կարգ, որը հատուկ է գործադիր իշխանության համակարգից դուրս գործող՝ Սահմանադրությամբ նախատեսված մյուս մարմինների համար: Այսպես, ընթացիկ օրենսդրությամբ քննչական մարմինների ղեկավարների և տեղակալների

նշանակումը և ազատումը վերապահված է գործադիր իշխանության մարմիններին: Օրինակ՝ ՔԿ նախագահին, ՀԲԾ պետին նշանակում է ՀՀ կառավարությունը՝ վարչապետի ներկայացմամբ, իսկ տեղակալներին՝ ՀՀ վարչապետը: Մինչդեռ գործադիր իշխանության համակարգից դուրս գործող Սահմանադրությամբ նախատեսված մարմինները (ՄԻՊ<sup>38</sup>, ԿԸՀ անդամներ<sup>39</sup>, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներ<sup>40</sup>, Հաշվեքննիչ պալատի անդամները<sup>41</sup>, Կենտրոնական բանկի նախագահ և խորհրդի անդամներ<sup>42</sup>) ձևավորվում են ոչ թե գործադիր, այլ օրենսդիր իշխանության կողմից:

Նշվածը վկայում է այն մասին, որ իրավաքաղաքական իրականությունը նույնպես չարձագանքեց գործադիր իշխանությունից դուրս քննչական մարմինների ստեղծման՝ արհեստական կոնստրուկցիային: Ավելին, քննության գործառույթից կիսադատական տարրերի զտումը և այն դատախազությանը վերապահելը լիովին իմաստագրկում է գործադիր իշխանությունից դուրս քննչական մարմնի կարգավիճակի պահպանումը:

*3.4. Փոփոխության համակարգային կապն այլ նորմերի հետ:* Քննչական գործունեության բովանդակությունն ապացույցների հավաքումն է, որը կազմում է քրեական ոստիկանության բուն էությունը: Ուստի, քննչական մարմինների մասին սահմանադրական դրույթը կարող է հանվել կամ տեղափոխվել գործադիր

37. Այս մասին մանրամասն տե՛ս **Головко Л. В.** Реформа полиции в контексте модернизации предварительного производства в российском уголовном процессе // <https://www.iuaj.net/node/484>.

38. Մարդու իրավունքների պաշտպանին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:

39. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին և մյուս անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:

40. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:

41. Հաշվեքննիչ պալատի նախագահին և մյուս անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:

42. Կենտրոնական բանկի նախագահին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Կենտրոնական բանկի նախագահ: Կենտրոնական բանկի խորհրդի մյուս անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, վեց տարի ժամկետով:



իշխանության մարմիններին նվիրված գլուխ: Սահմանադրության 8-րդ գլուխը պետք է վերախմբագրել՝ «Դատախազությունը» վերտառությամբ:

Մարդու իրավունքների գլխում քննիչների վերաբերյալ նորմերը պետք է վերացնել այնքանով, որքանով դրանք գործելու են ռազմականացված մարմինների համակարգում:

**Եզրահանգումներ:** Այսպիսով առաջարկվում է սահմանադրորեն ամրագրել, որ դատախազությունն անկախ և միասնական պետական մարմին է, որն իր գործառույթներն ու լիազորություններն իրականացնելիս ենթարկվում է Սահմանադրությանը և օրենքներին:

Առաջարկվող փոփոխությունները միտված են դատախազության՝ քաղաքական իշխանությունից անկախության ապահովմանը: Դատախազության անկախության սահմանադրական ամրագրման պարագայում կբացառվի նաև անհատական գործերի քննարկումն իշխանության առանձին ներկայացուցիչների հետ. պետք է վերանայել նաև տարիներ շարունակ ձևավորված պրակտիկան, որի համաձայն՝ Գլխավոր դատախազն առանց որևէ հատուկ անհրաժեշտության, ներկա է գտնվում Կառավարության նիստերին: Դատախազության գործառույթները կամ լիազորությունները չպետք է Սահմանադրությամբ սպառիչ սահմանվեն: Սակայն, Սահմանադրության մեջ պետք է ամրագրել, որ քրեա-

կան հետապնդման հարուցումը (անձին որպես մեղադրյալ ներգրավելը), գործը դատարան ուղարկելը, մինչդատական վարույթի ընթացքում քրեական հետապնդումը դադարեցնելը դատախազության բացառիկ գործառույթն է:

Սահմանադրության մեջ նախատեսել դրույթ այն մասին, որ դատախազությունը պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու, այդ նպատակով նյութեր հավաքելու դեպքերը և կարգը սահմանվում են օրենքով: Այս համատեքստում հարկ է հանել «բացառիկ դեպքերում» եզրույթը, ինչպես նաև պետական շահ հասկացությունը փոխարինել հանրային շահ հասկացությամբ՝ հնարավորություն տալով օրենսդրին որոշելու՝ կոնկրետ որ դեպքերում դատախազին լիազորել իրականացնելու հանրային շահերի պաշտպանությունը:

Քննչական մարմինների մասին սահմանադրական դրույթը կարող է հանվել կամ տեղափոխվել գործադիր իշխանության մարմիններին նվիրված գլուխ, իսկ Սահմանադրության 8-րդ գլուխը պետք է վերախմբագրել «Դատախազությունը» վերտառությամբ: Այս փոփոխության արդյունքում ոստիկանական գերատեսչության կողմից քրեական ոլորտում ապացույցների հավաքման գործունեությունը կսահմանազատվի դատախազական կամ դատական բնույթի գործառույթներից:



**ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ**

Ի. գ. դ., պրոֆեսոր  
 Հայ-ռուսական համալսարանի իրավունքի  
 տեսության և սահմանադրական իրավունքի  
 ամբիոնի վարիչ, ՀՀ վաստակավոր իրավաբան,  
 արդարադատության առաջին դասի խորհրդական

**ԹԱՄԱՐԱ ՇԱԲԱՐՅԱՆ**

ի. գ. թ., դոցենտ  
 ՀՀ պետական կառավարման ակադեմիայի,  
 ՀՀ-ում ֆրանսիական համալսարանի դասախոս,  
 ԵԽ ազգային փորձագետ,  
 արդարադատության առաջին դասի խորհրդական

**ԴԱՏԱԽԱԱԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԱՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Հոդվածում տարբեր տեսանկյուններից ներկայացվում է արդի սահմանադրական բարեփոխումների համատեքստում միջազգային փաստաթղթերին համահունչ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 8-րդ գլխում ամրագրված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ դատախազության և քննչական մարմինների վերաբերյալ ամրագրված նորմերից տարբերվող նոր իրավակարգավորումների սահմանման անհրաժեշտությունը: Հոդվածում ներկայացվում են դատախազության և քննչական մարմինների վերաբերյալ սահմանադրաիրավական իրավակարգավորումների բարեփոխման անհրաժեշտությունը ներպետական օրենսդրական և միջազգային փորձի իրավահամեմատական վերլուծությամբ, ինչպես նաև միջազգային փաստաթղթերում ներկայացված դիրքորոշումների վերհանմամբ՝ մինևույն ժամանակ ներկայացնելով սահմանադրական համարժեք իրավական լուծումներ:

**Բանալի բառեր.** սահմանադրական բարեփոխում, դատախազության սահմանադրական կարգավիճակ, գլխավոր դատախազի նշանակում, դատախազի իրավական պաշտպանություն, պետական շահերի պաշտպանություն, գլխավոր դատախազի ազատման հիմքերը, քննչական մարմիններ:

**АРТУР ГАМБАРЯН**

Доктор юридических наук, профессор,  
 советник юстиции первого класса,  
 заведующий кафедрой Теории государства и права  
 Российско-Армянского Университета,  
 заслуженный юрист РА

**ТАМАРА ШАКАРЯН**

Кандидат юридических наук, доцент,  
 советник юстиции первого класса,  
 национальный эксперт ЕС,  
 преподаватель Академии государственного управления и  
 Французского университета в Армении

**КОНЦЕПЦИЯ ИЗМЕНЕНИЙ ПРОКУРАТУРЫ И СЛЕДСТВЕННЫХ ОРГАНОВ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННЫХ РЕФОРМ**

Изменениями 2015 года Конституцией РА были разделены и зафиксированы в отдельных главах положения относительно судебной власти и прокуратуры как единой государственной системы, теми же изменениями в 8-ой главе Конституции РА были зафиксированы нормы про следственных органов. В статье представлены концепция изменений конституционных правовых норм прокуратуры и следственных органов со сравнительным анализом внутригосударственного законодательства и международного опыта, с выявлением позиций, отраженных в соответствующих международных документах, а также с предложением конкретных конституционно-правовых решений.

**Ключевые слова:** конституционная реформа, конституционный статус прокуратуры, назначение генерального прокурора, правовая защита прокурора, защита государственных интересов, основания освобождения генерального прокурора, следственные органы.

**ARTUR GHAMBARYAN**

Head of the Chair of Theory of State and Law of  
 the Russian-Armenian University  
 Doctor of Law, Professor,  
 First Class Councilor of Justice,  
 Honored Lawyer of RA

**TAMARA SHAKARYAN**

PhD in Laws, Associate professor of Law  
 First Class Councilor of Justice, EU legal expert,  
 Lecturer at the at the Public Administration Academy  
 of the RA and France University in Armenia

**CONCEPT OF AMENDMENTS OF PROSECUTION OFFICE AND INVESTIGATIVE BODIES IN THE CONTEXT OF CONSTITUTIONAL REFORMS**

The provisions on judiciary and prosecution office are set separately under the Constitution of RA with the 2015 amendments, and these two institutions are considered as separate units of unified state governance system therein. Chapter 8 of the RA Constitution with 2015 amendments also sets provisions regarding investigative bodies. The article presents concept of amendments constitutional norms concerning prosecution office and investigative bodies through drawing comparison between domestic legislation and international practice, revealing the requirements of international documents and, at the same time, proposes adequate constitutional legal solutions.

**Keywords:** constitutional reforms, constitutional status of the prosecution office, appointment of the Prosecutor General, legal protection of a prosecutor, protection of state interests, grounds of dismissal of Prosecutor General, investigative bodies.